



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.



Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Up

ԿՈՆԴԱԿ
ՀԱՐՍԱՆԵԱՑ



672001

2010

265

4-70





ՅԱԽՈՎՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵ ԾԱՌԱՅ
ՏԵՐ ԱԽՈՎՈՒՄ Ա. ՖՐԵԴ ԵԿ
ՀԿ ԱԿ ԱՐ ԲԱՐ ՀԱՅ
Հայոց կոստանդնուպոլիսոյ խճայեմք սղ-
ջոյն և օրհնութիւն Աստուածային՝ որոց
հանգերձեալ են պատկիլ և միութիւն
ամուսնութեան հարազատ որդւոց գ
Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկե-
ղեցւոյ:

Պատկը Ս. Եկեղեցւոյ եօթն խորհուրդ-
ներէն մէկն է, որով ցմահ պյը և կին
իրարու հետ կը կապուին անբաժանե-
լի կերպիւ: Այս խորհրդոյն կատարման

57911-ան



3303-21

ատեն պսակագիր Քահանային ըրած
հարցումները նոյն անքակտելի միու-
թեան համար պսակելոց սուրբ ուխտ մը
ընել կուտան առաջի Աստուծոյ և Եկե-
ղեցւոյն Քրիստոսի, և այս միութեան
ուխտն անդրժելի է . աղքատութիւն,
վիշտ, հիւանդութիւն չեն զօրեր ուխ-
տագիրներն իրարմէ բաժնել : Ուստի
ամենէն առաջ պէտք է որ երկու կող-
ման՝ այսինքն, հարսին և փեսային ա-
ռանձին կատարեալ հաւանութեամբն և
անտարակուուելի համովմամբն ըլլայ Նշա-
նըն ու Պսակը, Եւ աճազոտ որոշման Աղդ.
Կրօնական ժողովոյ ամուսնացող կամ
ամուսնանալի անձանց պարաւորու-
թիւնները համառօտիւ այսպիսի տետ-
րակի մը մէջ նշանակելով կը պարտա-
ւորեմք ամեն նշանառութեան ատեն
թէ փեսային և թէ հարսին կողմը զատ
զատ տալ այս տետրակներէն :

Հայր և Մայր ըլլալու հանգերձեալ
անձինք և ծնողք դիտնալու են որ աղդ
մը կազմողներն ընտանիքները լինելով՝
այն աղքեքն ոյ ընտանեկան առաքինու-

թեամբ զարդարեալ ընտանիքներ շատ
ունին, անոնք միւս աղդերը կը դերա-
զանցեն, որ ճշմարիտ հայրութեան և մայ-
քութեան միակ պարտքն է իրենց զա-
ւակները նախ բարի մարդ և հետեւաբար
բարի Քրիստոնեայ ընել : Հայրը իր գո-
րովանաց հետ, և Մայրը իր կաթին հետ
կրօնական և բարոյական ոկզբունքները
կը պարտաւորին տպաւորել իրենց զա-
ւակներուն որտից և հոգւոց մէջ, նայե-
լու է որ այն մատաղ որտերը մոլու-
թեանց սերմ չմտած՝ առաքինութեան
համար մշակեն զանոնք Աստուածապաշտ,
աղդասէր եւ մարդասէր ընելու համար
ինքինքին բարի օրինակ ընծայեն : Ա-
սոր համար ալ զիրար մաքուր սիրով,
անկեղծ որտով և ճշմարիտ գորովով սի-
րելու են, Հարք և Մարք լեզունին, որբ-
ատերնին և վարքերնին ամեն աղտեզու-
թենէ աղատ պահելու և իրենց անարատ
վարքով զաւակներուն աշքին առջև ա-
ռաքինութեան կենդանի դիրք մը տալու
են, անձին օրինակը հաղար խօսք կարժէ :

Բարի Հայրն ու Մայրն այնչափ գովելի

են, որ իրենց սրդւոցն աշխարհի բարութիւնները ժառանգութիւն ձգելէն ետքը՝ երկինքն ալ կը ժառանգեցնեն, Ծնողքի մը առաքինութիւնն յորդւոց յորդի կրնայ օրինակ ըլլալ և շարունակել, և մինչև երկինքի մէջ իրենց թռանց թուներուն թուները այսինքն՝ անհամար բազմութիւն մը կրնայ ներկայացնել. բարի ծնողքի համար ի՞նչ անպատճում երջանկութիւն է տսիկայ. քանզի այնպիսի ընտիր ծնողք՝ ոչ հարստութեան, ոչ փառքի, ոչ սնոտի հանգամանաց համար զիրար և իրենց զաւակունքը կը խնամեն, այլ այլն իր կնոջը ինամք տարած տաեն ինքինքն խնամած կը համարի, նոյնպէս կինն իր կողմանէ : Դարձեալ, ինքինքնին միայն զաւակներնուն ապագային համար անոնց հոգեոր և մարմնաւոր երջանկութեանը համար մէյմէկ պարտաւորեալ անձնուէր պաշտօնեայ կը հաւատան: Իրենց որդւոց առողջութեան և ճշմարիտ կրթութեանը հոգ կը տանին. անոնց արաւաքին զարդերէն աւելի սիրերը, ա հողիները զարդարել անոնց հո-

գին առաքինութեանց, և մարմինները աշխատութեան մէջ զօրացնել կաշխատին ամենայն փութով: Առաքինի այրը կամ կինը՝ մինչեւ անգամ մոլութեան կամ սխալանաց մէջ՝ մէկն զմիւմն ինկած տեսած տաեն, զգալով իր կողակցութեան կամ այլութեան պարտքը, առաւել սիրով և խնամով կ'զիւայ իր ընկերոջը վըայ, և բարի մարդուն հետ կենակցելը դիւրին բան մ'է, իսկ անբարի մարդուն հետ կենակցելով համբերութեամբ չար ճամբէն ի բարի դարձնելն դժուար բան. հետևաբար գովելի առաքինութիւն մ'է ըսելով անանկ գիւցազնական յաղթող սիրտ կը տածէ՝ որ Յանի Քրիստոսի Տեառն մերոյ Խաչին անուամբ պատուանդան կընէ իր սիրոց. այսպիսիք աղէկ հասկցած են որ Քրիստոնէին կեանքը խաչ է. որուն արժանալու համար առաքինի ըլլալու է:

Առաքինի ծնողք աշխատասէր կըլլան և իրենց զաւակներուն սէրը զիրենք ամենայն մեղաց մայրն եղող ծուլութենէն ազատ պահելով եթէ հարուստ ալ չկրնան ըլլալ՝ խիստ քիչ կը պատահի որ աղքատ

ըլլան։ Առաքինի ծնողքինայող տնտեսագէտ ալ կըլլան, և իրենց ծախքերը եկամուտներուն համեմատ կընեն, որպէս զի իրենցու զաւակներուն ապագայն թշուառութեան չմատնեն և այս զգուշութիւնն ամենամանր պարագաներու մէջ ալ ընելու են. վասնդի խիստ շատ անդամ շատ փոքրիկ անդգուշութիւնները սովորութեամբ մեծամեծ մոլութեանց կը դառնան։ Ուստի այս ինայողութիւնն որ ընտանեկան առաքինութեանց շէնքին առաջինքարն է, փեսան և հարսն իրարուհետ կապուելու պատրաստուած կէտէն առաջ սկսելու է, այսինքն հարսանիքին առաջ Ո՞րչափ անխոհեմութիւն է մեծամեծ ծախքերով հարսանեաց հանդէսներ կատարել, մանաւանդ անոնց՝ որ անկէ անդին ձեռքերնին բան չի մնար, բոլոր ստացուածքնին այն կարճատե օրուան մէջ կը մախեն, Ասկէց զատ՝ գիտնալու են երիտասարդք և կուսանք, որ իրենց ամենէն մեծ հարստութիւնը խնայողութիւնն է, փեսային գանձը իր անխոնջ աշխատութիւնն է, հարսին օժիտն ալ իր ա-

ուաքինութիւնը, Յաւալի է այն անձանց վիճակն որք փոխանակ իրենց ապրուստն Աստուծմէ և իրենց ձեռքերէն փնտուելու, իրենց կնոջ ստակին յոյս կը գնեն, և այն դրամօժիտն նրանք ըստուած նողկալի ու արդէն աղգային հոգեոր ժողովներով գատապարտուած պահանջման պայմանաւ կուզեն ամուսնանալ։

Ամուսնութեան պսակի խորհուրդը սուրբ է և հոգեոր, ուրեմն հոգեոր լըրջութեամբ և ջերմեաւանդութեամբ կատարելու է։ Շատ ալէկ կըլլայ, եթէ Ս. Եկեղեցւոյ մէջ կատարուի և ոչ տուները, գիտնալով որ միայն հարկեցուցիչ պատճառաւ վերջին ժամանակներս տուները Պսակ կատարելու սովորութիւնը քաղաքական նկատմանց պատճառաւ մըտած է միայնիկ Պոլիս, և գեռ Հայաստանի գաւառները միշտ Եկեղեցւոյ մէջ կը կատարեն այս սուրբ խորհուրդն, ինչպէս որ մեր երանեալնախնիք սահմանած են։

Կը պատուիրեմք նաև որ այս սըբազան խորհուրդն՝ որ Քրիստոսի Եկեղեցւոյ միութեան օրինակ ու խորհուրդն է՝ Աստուածային երգերով կատարուի, արեւ-

ցութիւնք եւ խայտառակութիւնք այս
սուրբ խորհրդոյն անարդանք կը բերեն։
Այն ահաւոր կէտին՝ յորում Քահանայն
ջերմաջերմ աղօթքներ կ'ընէ՝ հարսն ու
փեսայն սրտերնին Աստուծոյ նուիրելով
հանդիսականք ուխտիւք և ջերմեռանդու-
թեամբ խնդրելու են ի Քրիստոսէ, որ սէր
և սրբութիւն չնորհէ անոնց, ըստ որում
հարսնեորներուն պարտքը վկայութենէ
զատ՝ աղօթելէ նաև, որ այն կոչումը
օրհնէ աղդերու յաւիտենական Հայրը։

Ի վերջոյ կը յայտնեմք որ այլը պար-
տաւոր է իր կինն իր իշխանութեամբը
պահել իսկ կինը պարտաւորեալ է ընտա-
նեկան պարտքերը կատարել անպակաս։
Այլդումէ իւր կնոջ, ուստի և կինը պար-
տաւոր է հնազանդ ըլլալ իւր ամուսնոյն։
Երբ կինն իւր հարստութեամբն ապրեցը-
նէ իւր այրն ու ընտանիքը, այն տանը մէջ
ընտանեկան առաքինութիւնը, չըսեմք
անհնար, այլ գժուարին կըլլայ։ Ասանկ
պարագայներու մէջ օտար աղքաց ամեն
օրինակին ալ հետեին աղէկ չէ։ Առա-
ւել աղէկ է Աստուծոյ հրամանին հնա-

զանդ և ծնողական պարտաւորութեանց
ուշադիր ըլլալով երջանիկ լինել քան թէ
օտարներու անկարգ սովորութեանց հե-
տամուտ ըլլալով ապերջանիկ լինել։

Արդ՝ հայրական սիրով կը յորդորեմք
զձեղ սիրելի որդեակը մեր ի Քրիստոս՝
որ վերոգրեալ համառօտքայց ամենակա-
րեսր խրատաբանութեան ուշադրութիւն
մատուցանելով այս ժամէն, այսինքն ձեր
նշանուելու ատենէն սկսիք ձեր սիրտե-
րը պատրաստել ամուսնական և ծնողա-
կան առաքինութեանց, և ամեն ջանք ը-
նէք այնպիսիլաւ յատակագծի վրայ հիմ-
նել ձեր ընտանեկան կենաց շէնքը, որ
աշխարհի ամեն յաջողութեանց և ձա-
խորդութեանց ալեաց առջև անխորտա-
կելի մնայ, և Աստուած՝ որ մեր երա-
նաշնորհ հարց ամուսնութիւնն օրհնեց
իր միակ յաւիտենական Որդւով՝ օրհնէ
և զձեղ և ձեր զաւակները։

Այս կարեոր խրատաբանութենէ ետ-
մզմարժան կը համարիմք թէ վեսացուին
թէ հարսնցուին և կնքահօր կողմանէ
նշանտուութեան և Պսակի օրը՝ թէ Ազգ։

Կեդրոնական գրամարկեղ եւ թէ տաներէց քահանայներուն վճարուելիք նըռէլները յատուկ ցուցակաւ նշանակետետրակիս ներքեւ, և յորդորել զամենքդ, որ յօժարական եւ զուարթսրտիւ զանոնք հատուցանելու փոյթ ունենաք:

Ողջ լերուք և օրհնեալք ի զլխոյն եկեղեցւոյ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և ի Սրբոց նորա, եւ ի մէնջ, Ամէն:



Նշանադիր եւ Պսակադիր Քահանային վրայ պարտք կը դնեմք, որ այս խրատական կոնդակը նախ՝ առանձինն Հարսնացուին եւ Փեսայացուին ի ժամու նշանադրութեան, եւ ապա ի ժամ պսակին առաջի պսակելոց եւ ժողովրդեան՝ բարձր ձայնով կարդան եւ բացատրեն :



Ա. ՑՈՒՑԱԿ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿԵՂ ՎՃԱՐԵԼԻ

	Փեսացուին կողմանէ		Դաշտական գումարներ		Համարական գումարներ		Փեսացուին կողմանէ	
	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ
Ա. Աստիճ.	Ըստ Համարական գումարներ							
Բ.	1000	500	1500	20	500	500		
Գ.	600	300	900	20	300	300		
Դ.	400	200	600	10	200	200		
Ե.	300	150	450	10	150	150		
Զ.	200	100	300	10	100	100		
Է.	150	75	225	10	75	75		
Ը.	100	50	150	5	50	50		
Թ.	80	40	120	5	40	40		
Ժ.	50	25	75	5	25	25		
Ճ.Ա.	2րի	2րի	2րի	2րի	2րի	2րի		

ԽԱՆՈԹԱՅԻՆ

1. Խնչպէս որ կը աեսնուի կնքահօր սիւնակին մէջ կնքահօր վճարելու Թագվերաց անուն նուէրն, անոր նոյնչափը Փեսացուն եւ նոյնչափն ալ կնքահայրը պարտաւորեալ են վճարել Ս.Պ.Հ. կան Քահանային հարսառի ժամանակական ժամանակական:

2. Թագառութեան ժամանակ տաներէց Քահանայն գինի բաժնած ատեն կրնայ Հանդիսականներէն կամաւոր նուէր ընդունիւ:

Բ. ՑՈՒՑԱԿ

ՏԱՆԵՐԵՅ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՎՃԱՐԵԼԻ

	Թէ՛ Փեսացուին և Թէ Հարսնցուին կողմանէ		Եղանական գումարներ		Ամսագումարներ		Եղանական գումարներ	
	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ	Ըստ համարական գումարներ	Ըստ դաշտական գումարներ
Ա. Աստիճ.	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ	Ըստ Համարական գումարներ
Բ.	—	—	—	—	—	—	—	—
Գ.	—	—	—	—	—	—	—	—
Դ.	200	200	800	150	200	200	800	150
Ե.	150	150	500	120	150	150	500	120
Զ.	100	100	400	100	100	100	400	100
Է.	75	75	300	80	75	75	300	80
Ը.	60	60	250	60	60	60	250	60
Թ.	50	50	200	40	50	50	200	40
Ժ.	50	50	150	20	50	50	150	20
Ճ.Ա.	2րի	2րի	2րի	2րի	2րի	2րի	2րի	2րի

3. Երբոր պատահի՝ որ նշանտուռութենէ ետքը մէկ կամ միւս կողմէն որ եւ է պատճառաւ մը նշանը ետ ընկե հարկ ըլլայ՝ ըստ որոշման Ա.Պ.Հ. յին Վարչութեան նշանտուռութեան օրը երկուստեք վճարուած գումարին նոյնչափը պիտի վճարէ իրբ տուգանք Ա.Պ.Հ. յին կեդրոնական սնտուկին:

4. Զրի կը կտարարուին միայն այն աղջկանց նշանտուռութիւն՝ որոց չքաւորութիւնն վկայեալ եւ հաստատեալ է թաղին եկեղեցւոյ Թաղական Խորհրդէն:

Գ. ՑՈՒՑԱԿ

Ա.ՄՈՒՄՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՈՑ ՀԱՄԱՐ

ԿԵԴՐ. ՍՆՏՈՒԿԻՆ ՎՃԱՐԵԼԻ

Ա. Աստիճ.	Քառականիք	
	Համարից	Համարից
Բ.	200	200
Գ.	120	120
Դ.	80	80
Ե.	60	60
Զ.	40	40
Է.	50	50
Ը.	20	20
Թ.	10	10
Ժ.	5	5



3035



ՀՀ Ազգային գրադարան

A standard linear barcode used for library cataloging.

NL0030125

2948